

չատակարանը, զոր արտադրած է մասամբ իր գործին 90-91 էջերուն մէջ, առանց տալու, սակայն, որոշ թուականը (ինքը ոչ մէկ թուական նշանակած է տպագրութեան համար): Ան յիշատակարանին խօջայ Վաղանն (ըստ Զարրհանեւեանի) կարդացած է «ղնօջայ Վարդանն» եւ փակագծի մէջ աւելցուցած է. «(յայլ ձեռագիր հատուկոտորս, խօջայ Վաթան կոչի նա)»: Անշուշտ, չեմ գիտեր թէ ինչո՞ւ ան նրկատի չէ ունեցած տպագրական այս թուականը, որ իրեն թոյլ չպիտի տար Սարփրազի մահուան թուականը 1676 նշանակել:

Փոքր ճշգրտմ մը եւս: Հ. Զարրհանեւեանի համաձայն, ճուան Պաղիսդա իր յիշատակարանին մէջ կը գրէ.

«Յարաժամ ԿԱՅԻ տեսանել զքեզաշուք իշխանն Հայոց խօջայ Սափրազն, զոր ոչ կարացի հասանել ՅԱՆԿՈՒԹԵԱՆՍ Իմոյ»: Հոս գործածուած ԿԱՅԻՆ անխմատ է որ կը սրբազրեմ Տէր Յովհաննանցի «յարաժամ ՅԱՆԿԱԼԻ տեսանել»-ով եւ այդպէս կ'ունենանք սրբազրեալ (գէթախտարար Յիսուս Որդիի այս տպագրութիւնը չունիմ) «յարաժամ ՅԱՆԿԱՅԻ տեսանել զքեզաշուք իշխանն Հայոց խօջայ Սափրազն, զոր ոչ կարացի հասանել ՅԱՆԿՈՒԹԵԱՆՍ Իմոյ»:

ճուան Պաղիսդա մեզի կ'ուզէ ըսել, որ «կը ցանկայի օր մը անձամբ տեսնել խօջայ Սափրազը, որուն մեծանուն համբաւը ինծի ալ հասած էր, սակայն ցանկութիւնս չկատարուեցաւ, քանի որ ան մեռաւ (1660-էն առաջ)»:

Եւ եթէ 1656-ին մեռած էր Սարփրազ, ընական է որ 1660-ին հրատարակուող գրքի մը տպագրիչը չէր կրնար զինքը տեսնել:

Յիշատակարանիս մնացեալ մասը խօջայ Սարփրազի որդւոյն մասին այն տպաւորութիւնը կ'ընէ, որ իր հօր հետ որդին ալ մեռած էր:

* * *

Տէր Յովհաննանց իր Պատմութեան մէջ (էջ 3, Ա. մաս) կը յիշէ «տետրակ մը գրեալ ի Տէր Ստեփաննոս քահանայէ ի գեղջէն Հաղարջիբոյ դաւառին փէրիու, զոր գտի ի գըրջատան Ամենափրկչեան վանի»:

Հոգ կը պատմուի Հաղարջիբոյ վանքին (Ս. Աստուածածին) շինութեան պատմութիւնը:

նը: Այս վանքը կը հիմնուի 1665-ին եւ, Տէր Ստեփաննոսի համաձայն, Յակոբ Զուղայեցի կաթողիկոսին կողմէ երկու նուիրակներ, Դաւիթ Արքեպիսկոպոս եւ Ստեփաննոս վարդապետ, միարանք էջմիածնայ, կը շինեն Սպահան եւ շրջակաները պողիստաւաքի համար:

«Եւ եղեւ ի դաշն նոցայ ի քաղաքն յԱսպահանի վանս սրբոյ Ամենափրկչի եւ ի սուրբ յեկեղեցիսն որ ի (Նոր) Զուղայ՝ քարոզել եւ ժողովել զպատուս նոցա, եւ յամեաց զորոն իրբեւ ամիսս 2 (6) քանդի էին ժողովուրդք բազում համարով տունս իրբեւ ԲԺ (երկտասկ) ան հազարս (12,000) եւ աւաք նոցա էր խօջայ Սափրազն՝ որդի խօջայ Նաղարին...: Յետ այսր ամենայնի պատրաստեաց զինքն զնալ ի դաւառն Շիրազոյ, բայց ո'չ եթող խօջայ Սափրազն պատճառս յօղելով թէ ո'չ կարես առանց հրամանի թագաւորին զնալ ի կողմն Շիրազու, եկ ի միասին երդիցուք առ թագաւորն եւ առցուք հրաման արքունական՝ զնալ ի Շիրազ, եւ ասէ վարդապետն յոյժ բարի է արասցուք այդպէս»:

Խօջայ Սափրազի մասին վկայութիւն պարունակող այս դէպքերուն թուականը չէ տրւած, սակայն հատուածին սկիզբի թուականէն կարելի է ենթադրել, որ 1665-ը պէտք է իրբեւ թուական ընդունիլ: 1665-ը, սակայն, անընդունելի է, քանի որ 1660-ին հրատարակուած Յիսուս Որդիի տպագրական յիշատակարանին մէջ ճուան Պաղիսդա որոշապէս կը վկայէ, որ խօջայ Սարփրազ «Փոխեալ է առ Աստուած», այսինքն՝ մեռած է: Պարզ է, որ 1660-էն առաջ մեռնող խօջայ Սարփրազը 1665-ին, Տէր Ստեփաննոսի վկայութեան համաձայն, էջմիածնայ նուիրակ Դաւիթ եւ Ստեփաննոս միարաններէն մէկուն կամ միւսին հետ Շահ Ապսպահին (Բ) չէր կրնար ներկայանալ եւ միջնորդել:

Տէր Յովհաննանց, որ մասամբ օգտուած է Տէր Ստեփաննոսի պատմութենէն, այդ գործի մասին կը վկայէ.

«Ոճ պատմութեանն էր բաղմարառ եւ սակաւիմաստ. յորմէ ընտրանօք քաղեալ զետեղեցի յիմում պատմութեան զնիւթս իւրաքանչիւր զլիսոյ պատշաճաւոր. եւ ուրանօր ի մէջ